

352(47.924)

Խ-84

15365

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ի

ՑԱՆՔՍԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱ-  
ԿԱՆ ՏՈՒՐՔԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՄ-  
ՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հրատարակուք. Ադրկեմսրգործկոմի

Կազմբաժնի

ԲԱԳՈՒ 1929 թ.



ՅԱՆՔՍԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ - ՍՏՈՒԳՈՒՄՆ  
Ե ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ.

## ՅԱՆՔՍԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

(Իլուդիստրիի լեվ նրա գյուղատնտեսական սեկցիայի ղեկավարու-  
րյան համար)

Իարևանացանի կամպանիան ունի ֆադախական լեվ գործնա-  
կան մեծ նշանակություն: Այդ կամպանիայի նպատակն է լայնաց-  
նել ցանկերի ստրածուրյունը լեվ բարձրացնել բերման վարյունը:

Անցած տարվա փորձը ցույց է տվել, Վոր կուլակներն ա-  
մեն կերպ աշխատում են խանգարել մեր ցանքային կամպա-  
նիաները: Մասնավորապես անցած դարնանացանի կամպանիա-  
յին նրանք բավականաչափ քչացրել են իրենց ցանքի տարա-  
ծությունը:

Այդ հանգամանքը պիտի աչքի առաջ ունենան գյուղխոր-  
հուրդները, կուպերատիվ կազմակերպությունները, կոլխոզները,  
փոխուկոմները և առհասարակ գյուղական ամբողջ հասարակու-  
թյունը: Պետք է աչքի առաջ ունենալ, Վոր կուլակը հաղթվելով  
վերընտրությունների ժամանակ, կատաղած իր անհաջողությու-  
նից, այժմ չի բավականանա իր ցանքները կրճատելով միայն.  
նա կքչացնի իր ցանքները և ամեն կերպ կաշխատի, Վոր չքա-  
վորները և միջակների ցանքներն ել չավելանան, նա կաշխատի  
կոլխոզները և վոտոգման ընկերությունների աշխատանքներն ել  
վարկարեկել: Մի խոսքով կուլակը կախատի վարկարեկել Խոր-  
հուրդային իշխանությունն այն բոլոր միջոցները, Վորոնք ձևք են  
առնվում գյուղական տնտեսությունը բարձրացնելու համար:

Կուլակի բեթը ջարդել ենք խորհուրդների վերընտրություն

НА ПЕЧАТАНО

в гостипографии „Красный Восток“

БАКПОЛИГРАФА.

Баку, Карантинная, 84.

Главлит № 1671. Заказ № 4916.

Тираж 1000 экз.

2001

16005-58

32888 - 4. 2.

ների ժամանակ, խորհուրդների, փոխոգկոմիտեի, կոլխոզների, միջակների և չքավորների միասնական ֆրոնտով վերջնականապես ջախջախենք նրան ցանքսային կամպանիայի ժամանակ: Գյուղական ժողովներում պե՛սֆ ե բացատրել բամբակ յե՛վ հաց ցանողներին, վոր ցաններն ընդարձակելը բացառիկ նեանակություն ունի.— հացահատիկների յե՛վ սեխնիկական բույսերի ցաններն ընդարձակելը կոգե՛ի լավացնելու գյուղական սեփեսությունը դրությունը յե՛վ կապահովի հուս նյութերով մեր արդյունաբերությունը: Մյուս կողմից չֆավոր յե՛վ միջակ խմբերի ցաններն ընդարձակելով մենք ավելցուկով կբացնենք այն պակասը, վոր առաջ ե գալիս գյուղի կուլակների յե՛վ ունեվորների պակաս ցանելու շնորհիվ: Այդպիսով մենք վոչ միայն անտեսական ոգուտ կստանանք, այլ ասելի ե հույ կտանք կուլակին և կամրապնդենք մեր քաղաքական հաթթանակը նրա վրա:

Գյուղխորհուրդները գյուղի իշխանության միակ և առաջին կրողներն են. հասխանալի ե, վոր նրանք հատուկ տեղ են բըռնում ցանքսային կամպանիան լայնայնելու գործում: Գյուղական խորհուրդները— ցանֆախին կամպանիայի շարքներն են:

Գործնականորեն ի՛նչ ենք սպասում մեր խորհուրդներից այս կամպանիայի վերաբերմամբ: Գործնականորեն ի՛նչ պետք ե անեն նրանք:

Գյուղական խորհուրդներն ամեն կերպ պիտի ղեկավարեն, վոր կամպանիան լավ կազմակերպի. պե՛սֆ ե կազմակերպված ոգնություն հասցնեն գյուղացիությանը, գյուղատնտեսական միություններին, կոլխոզներին, արեյներին, ընկերություններին: Գա ավելի ֆան կարեվոր ե, վորովհետե՛վ Ադրբեջանում գարնանն են ցանում արեվար բույսերը— բամբակը, բրինձը, ծխախոտը:

Գյուղական խորհուրդները հենց հիմա պիտի կազմակերպեն իրենց գյուղատնտեսական սեկցիաները՝ խորհուրդների ամենաակտիվ անդամներից: Նրանք պետք ե կոլխոզների, կոմունար, գյուղատնտեսական միությունների վոտոգման և վարկային ընկերությունների հիտ միասին՝ լայնորեն և գործնականորեն քննվեն գարնանացանի կամպանիայի հարցերը— թե հատուկ արտադրական խորհրդակցություններում և թե խորհուրդների նիստերում: Պետք ե մշակեն գործնական ծրագիր, վորի մեջ պիտի մտնեն կուլտուրական, տնտեսական և տեխնիկական բոլոր միջոցները՝ ցանքսային կամպանիային ծառայելու համար: Գործիչները այդ լայն խորհրդակցությունից պիտի քաշել սեկ-

ցիայի աշխատանքներին: Պիտի հաշվի առնել կոլխոզների արտեղների և անհատական տնտեսությունների ունեցած դյուղատնտեսական ինվենտարը, վորոշել թե ի՛նչ նորոգման կարիք կա և կազմակերպել նորոգման գործը: Պետք ե հաշվի առնել ինվենտարի և տվյալ ուսյունի յենթադրվող ցանքսերի տարածությունը արտադրական հնարավորությունները: Պետք ե հաշվել, թե վորքան սերմացու և միջոցներ են հարկավոր. պետք ե վորոշել, թե սակավակարող տնտեսությունները վարելու ոգնություն վորքան կարիք ունեն. և այդ բանը պիտի կազմակերպել իրեն հասարակական, կոլլեկտիվ աշխատանք:

Պետք ե հոգալ, վոր ժամանակին հարկավոր չափով ջուր տրվեն ցանքսերը ջրելու համար: Պիտի հետևել, վոր սերմացուն, գյուղատնտեսական մեքենաները ու գործիքները և ցանողներին հատկացրված վարկերը ժամանակին բաժանվեն և առաջին հերթին տրվեն չքավորներին:

Կառավարության ղեկավար ուղանների յե՛վ կուսակցության վորուսուր՝ գյուղատնտեսական բարելավումների նվազագույն չափի մասին՝ ամենայն վնասակարությամբ պիտի իրագործել կյանքում ցանֆային կամպանիայի ընթացում յե՛վ խորհուրդները դրա համար պիտի պատասխանատու լինեն:

Գյուղատնտեսական տարի նոր սերիք, վոր գյուղի սակավակարող յե՛վ միջակ խավերին աչի ընկնող արտոնություններ ե սալիս, ցանների ընդարձակումը խրախուսում ե,— պե՛սֆ ե կարգալ խորհուրդներում յե՛վ գյուղական արտադրական խորհրդակցություններում:

Առանձնապես պետք ե շեշտել փոխոգկոմիտեի գերը ցանքսային կամպանիայում:

Փոխոգկոմիտեի անելիքը վոչ միայն գարնանացանքսի տարածությունը ընդարձակելը պիտի լինի, այլև նրանք պիտի կազմակերպեն հողի կոլլեկտիվ մշակումը: Փոխոգկոմիտեի միջոցով ե, վոր գյուղխորհուրդը պիտի կազմակերպի կոլլեկտիվ ցանքս չքավորների համար:

Մեր առջև ամբողջ իր մեծությունը դրված ե գյուղի վերակառուցման աշխատանքները գործնականորեն զարգացնելու և ուժեղացնելու խնդիրը և գյուղում տնտեսության կոլլեկտիվ ձեվերի արմատավորումը: Այդ նպատակի համար ամենամեծ չափերով պիտի ոգտագործել առաջիկա գարնանացանի կամպանիան

դա գյուղխորհուրդները և հասարակական կազմակերպութիւնները ուղղակի պարտականութիւնն է:

Գյուղատնտեսները, փորձադաշտերի, ագրոկետերի, գյուղ-յերիադպրոցների գործիչները, գյուղական ուսուցիչները, խրճիթավարները, կոմյերիտմիութեան ակտիվը—բոլորը պետք է իրենց վրա վերցնեն գյուղական մասսաների ակտիվութիւնը բարձրացնելու գործի ամբողջ ծանրութիւնը, կազմակերպեն նըրանց գարնանացանի կամ պանիայի խնդիրները կատարելու համար: Կամ պանիան կարող է հաջող անցնել միայն, յեթե մասսայական լայն թափ ստանա: և այդ գործում հասարակական գործիչ գյուղատնտեսական աշխատավորները դերը վերջինը չէ: Գյուղական խորհուրդները իրենց ձեռքը վերցնելով ղեկավարութիւնը պիտի գարնանացանի կամ պանիայի գործը կազմակերպեն և հաջողութեամբ վերջացնեն:

**ՑԱՆՔՍԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՄԲՈՂՋ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԻՏԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԿՈՆՏՐՈԼԻ  
ՏԱԿ ԼԻՆԻ**

### **ՎԵՐՋ ՏԱՆՔ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ, ԿԱՌՈՒՑԵՆՔ ՆՈՐ ԾԵՆՔԵՐ ԿՈՒՆՏՐՈՒՐԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ազրբեջանի գյուղխորհուրդներն աշխատում են շատ ծանր պայմաններում:

Մեր գյուղը դեռ շատ անկուլտուրական է. նրանում գեուկա պինդ նստած են հին կենցաղի մնացորդները: Գյուղացու տնտեսութեանը համարյա ամբողջովին դեռևս տարվում է հին ձևով, առանց մեքենաներ, պարարտացում գործադրելու: Մենք դեռևս չենք կարողանում լիովին բավարարել բնակչութեան կուլտուրական պահանջները, վորովհետև դեռևս լայնորեն չի տարածված դպրոցների, հիվանդանոցների, խրճիթ-ընթերցարանների ցանցը:

Կինը դեռևս լիովին չի ազատվել այն դրութիւնից, վորի մեջ նա յեղել է տարիներ: Գյուղացիական հասարակական կազմակերպութիւնները—փոխօգկոմիտեները, զանազան ընկերութիւնները դեռ լիովին չեն ընդգրկել աշխատավորների բոլոր մասսաներին: Մենք դեռ քիչ ճանապարհներ ունենք, վոր ամեն տեղ կան կամուրջներ:

Եւ բոլորը մենք պիտի շինենք, ինչ էլ վոր լինի, չնայելով վոր մի ծանրութեան և ջանքերի:

Բայց ամեն մի գործ, մանավանդ գյուղի վերակառուցման գործը կարելի է դուրս բերել յեթե նրա մեջ քաջվեն իրենք—աշխատավոր մասսաները:

Միայն ընդհանուր ջանքերով, մասսաների և նրանց ընտ-

**ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ. ՑԱՆՔՍԱՅԻՆ ՑԱՐԱՇՈՒԹՅՈՒՆԸ ՅԱՏԱՅՆԵԼՈՒ ՅԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ**

բած որդանները—խորհուրդները կուլեկտիվ աշխատանքով մենք կարող ենք գլուխ բերել ամեն մի գործ, վորքան էլ նա դժվար լինի:

Իսկ գործն էլ այնչի է դժվարանում, յերբ մենք հիշում ենք, վոր մեր բնակչության մեջ հսկայական քանակությամբ անգրագետներ կան, մինչև իսկ գյուղխորհուրդների անդամների մեջ: Խորհուրդները յուրաքանչյուր 100 անդամից մոր 80-ն անգրագետ է: Յե՛վ դա խորհուրդներում—այն որդաններում, վոր կոչված են ղեկավարելու գյուղի տնտեսական և կուլտուրական կյանքը: Հասկանալի է, վորքան շատ գրագետներ լինեն խորհուրդներում, այնքան էլ ամբողջ խորհուրդը ավելի լավ գլուխ կբերի գործը: Դրա համար է, վոր մենք անհրաժեշտ ենք համարում հնարավորության չափ շուտով վերջ տալ խորհուրդների նոր անդամների անգրագիտությանը: Մենք պիտի աշխատենք, վոր խորհուրդներում վոչ մի անգրագետ անդամ չլինի:

Խորհուրդների անդամների անգրագիտության վերջ տալու գործը պիտի սկսել հենց հիմնիվանից, առանց ուշացնելու յիվ վերջացնել առաջին 6 ամսում:

Եւ գործն իրենց վրա պիտի վերցնեն Լուսժողովատը և իրենք—խորհուրդները:

Խորհուրդները իրենց կուլտուր-լուսավորական սեկցիաների միջոցով պիտի առանց ուշացնելու հաշվի առնեն բոլոր անգրագետ անդամներին, կապվեն դպրոցների, ուսուցիչների հետ, կարգավորեն ուսումնական պիտույքներ հասցնելու գործը և շարունակ առանց ուշադրությունը թուլացնելու ղեկավարեն այդ կարևոր և պատասխանատու անելիքը:

Անդամների անգրագիտության վերացումը պիտի համարվի խորհրդի հիմնական գործնական և մասսայական աշխատանքը:

Խորհրդի անգրագետ անդամը չի կարող լինել Խորհրդային իշխանության ձեռք առած միջոցների հաղորդիչը և տարածողը:

Մեր հիմնական լուրնգն է.—«խորհրդի յե՛վ վոչ մի անգրագետ անդամ»:

Մի ուրիշ կարևոր անելիք, վոր այժմ դրված է մեր առաջ.—գա ընդարձակ շենքեր դռնելն է, վորտեղ կարելի լինի ապահովել ներ, խրճիթ-ընթերցարաններ, խորհուրդը տեղավորել: Մեր գյուղում քիչ կան այդպիսի շենքեր և դա շատ վատ է ազդում հասարակական և կուլտուրական աշխատանքների վրա:

Վերընարական կամպանիայի ընթացքում բնակչությունը շատ յեկեղեցիներ և մզկիթներ է տվել կուլտուրական կարիքների համար: Իսկ մզկիթը և յեկեղեցին դյուրում համարյա ամենից մեծ և ամենից լավ շենքերն են: Պետք է դրանք հարմարեցնել, սարքել, շինել դրանցից այնպիսի շենքեր, ուր կարելի լինի ժողովներ անել, ուր կարողանա նիստեր ունենա խորհուրդը, ուր անգրագիտությունը վերացնելու դպրոց, դրադարան, կանոնաց անկյուն կարելի լինի բանալ: Գյուղական խորհուրդներն այդ գործով պիտի ղեկավարեն հենց այժմվանի, իրենց կուլտուր-լուսավորական կազմակերպությունների միջոցով, բազմակողմանի պիտի ջննեն և գործնականորեն իրականացնեն:

Ամենից լավ և արագ այդ բանը կարելի է անել ինքնատուրքադրումով անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելով. այդպիսով կարելի կլինի մոտակա մեկ-յերկու տարվա ընթացքում վերջացնել այդ աշխատանքը:

Գյուղացիությունն ինքն առաջին հերթին պիտի զբաղվի դրանով, իսկ խորհուրդները և սեկցիաները պիտի ղեկավարեն, հետևեն և կազմակերպեն, վոր գյուղն իր սեփական միջոցներով կուլտուրական կարիքները հոգա:

Կոմսոմոլը, պատվիրակային ժողովները, բատրակներն, աշակերտները, փոխողկոմներն, ընկերությունները պետք է մեյդան բերեն վորքան կարելի է մեծ նախաձեռնություն:

Խորհուրդները, սեկցիաները, խորհրդային պիտիվը պիտի այս մեծ գործի յեռանդուն մասնակիցները և ղեկավարները լինեն:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ—ԴԵՊԻ ԲԵՐԲԻ ՆՎԱՃՈՒՄԸ

## ՎԵՐԱՅՍՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՈՒՆՆԵՐԸ

Գյուղական խորհուրդների և դայրագործկոմիտեերի վերստուգիչ հանձնաժողովները հասարակական վերահսկողութեան որդաններն են,—բանվոր-գյուղացիական մասսաների հսկողներն են գյուղական խորհրդի նյութական և տնտեսական գործունեյութեան վրա:

Վերստուգիչ հանձնաժողովները իրենց միջից ընտրում են նախագահ և քարտուղար, տեխնիկական ապարատ չունեն և անհրաժեշտութեան դեպքում ոգտվում են գյուղխորհրդի ապարատից:

Վերստուգիչ հանձնաժողովներն ստուգում են գյուղխորհրդի յեկամուտները, դրանց պահպանումը և փողերի ծախսումը. նույնպես հսկում են, վոր յալ պահվեն և ոգաագործվեն գյուղխորհրդի խրճիթ-ընթերցարանների, դպրոցների մյուս ունեցվածքը, հասարակական գյուղատնտեսական գործիքները և այլն:

Վերստուգիչ հանձնաժողովները ստուգում են դրամական և նյութիեղենի հաշվետվութեանները՝ թե գյուղխորհուրդների և թե ձեռնարկիների, վոր գտնվում են գյուղխորհուրդների իրավունքի տակ—դարբնոցների, ջրաղացների և այլն:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է հարկերի և ամեն տեսակ տուրքերի կանոնավորութեանը, վոր արվում են թե որենքով սահմանած կարգով և թե ինքնատուրքավորման միջոցով: Վերստուգիչ հանձնաժողովները հետևում են, վոր հասարակական գումարներն ուղիղ ծախսվեն, բաց են անում չարագործութեանները և բոլոր թերութեանները:

Վերստուգիչ հանձնաժողովները ստուգում են գյուղխորհրդի սեկցիաների աշխատանքը, հողային ընկերութեաններին նյութական-տնտեսական գործունեյութեանը, վորոնք գործում են գյուղական կամ դայրայի բյուջեյով:

Վերստուգիչ հանձնաժողովները ստուգում են պետական ապահովագրական վճարումները գանձողների և ազենատների աշխատանքը, նույնպես և հետևում են ընկերութեանները արվող ապահովագրական արտոնութեաններին:

Յեթե գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովը բաց է անում վատնում, պետական կամ հասարակական միջոցների ապուրեն և անձիշտ ծախսում, ղեկուցում է դայրագործկոմիտեի հանձնաժողովին, իսկ այս վերջինս գալառական գործադիր կոմիտեյին: Այդ նույն չարագործութեանների մասին վերստուգիչ հանձնաժողովը հայտնում է գյուղխորհրդի նիստում և տեղեկացնում է քաղաքացիներին հերթական կամ հատկապես հրավիրված ժողովում:

Հերթական ստուգումները կատարվում են 3 ամիսը մեկ անգամից վոչ պակաս, իսկ հանկարծակի ստուգումներ կատարվում են թե վերստուգիչ հանձնաժողովի նախաձեռնութեամբ և թե վերին կազմակերպութեանների հանձնարարութեամբ:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում կատարելիս պետք է ամեն անգամ գրավոր ակտ կազմեն. ակտի մեջ պիտի մանրամասն ցույց տան, թե ինչ է բացվել, ինչ հետևանք է ունեցել ստուգումը և վերստուգիչ հանձնաժողովն ինչ է խորհուրդ տալիս անելու՝ նկատված թերութեանները վերացնելու համար: Ստուգման ակտերը պարտավոր են ստորագրելու ստուգում կատարող բոլոր անդամները և գյուղխորհրդի նախագահը:

Ստուգումները կատարվում են այն անձերի ներկայութեամբ, վորոնք հիմնարկի գլուխ են կանգնած:

Վերստուգիչ հանձնաժողովները ստուգումներ կատարելիս կարող են բացատրութեաններ համար կանչել գյուղական պաշտոնատար անձերին և նայել գյուղխորհրդի բոլոր գրքերն ու դոկումենտները: Ստուգում կատարելիս վերստուգիչ հանձնաժողովները կարող են իրենց սզնելու համար հրավիրել տեղական գործիչներին՝ բժիշկներին, դյուղատնտեսներին, հաշվապահներին և այլն:

Վերստուգիչ հանձնաժողովները ստուգումներ կատարելիս պետք է ներկա գտնվեն գյուղխորհրդի բոլոր նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Վերստուգիչ հանձնաժողովները անգամներ կարող են և պետք է ներկա գտնվեն գյուղխորհրդի բոլոր նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Գյուղխորհուրդն իրավունք չունի խառնվելու վերստուգիչ հանձնաժողովների գործունեյութեանը, նույնպես և գյուղխորհուրդը վոչ մի չափով չի յենթարկվում վերստուգիչ հանձնաժողովին:

գողին: Վերստուգիչ հանձնաժողովը միայն ստուգում է կատարում և նրա արդյունքները ղեկուցում է խորհրդին ու վերին հաղմակերպութեանը: Վերստուգիչ հանձնաժողովները իրազեկուք չունեն խառնվելու գյուղխորհրդի ընթացիկ գործունեությանը, նույնպես և գյուղխորհուրդներին յենթակա հիմնարկների և ձեռնարկների գործերին:

ՄԵՆՔ ՀԱՂԹԵԼ ԵՆՔ ԿՈՒԼԱՃԻՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՄ. ԱՎԵԼԱՑՆԵՆՔ ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՑԱՆՔՍԵՐԸ, ՎԵՐՁՆԱԿԱՆԱՊԵՍ ԶԱԽՉԱԽԵՆՔ ԿՈՒԼԱԿԻՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅՈՒՄ

## ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԿԱՆԱՆՑ ԱԿՏԻՎԸ ԴԵՊՈՂԵԿԱՎԱՐ ԱԾԽԱՏԱՆՔ

ՊԵՏՔ Ե ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԻՆ ԿԻՑ ՇՈՒՏՈՎ ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Մեր ամենաթույլ կողմն այն է, վոր ուժեղ աշխատանք չի տարվում չքավորների և կանանց ակտիվ պատրաստելու համար:

Խորհուրդների վերընտրութեանները ցույց են տվել, վոր մենք բատրակների ու չքավորների ակտիվ ունենք, բայց այդ ակտիվն ամբողջով չէ ու քիչ է կազմակերպված:

Խորհուրդների ընտրութեանները ցույց են տվել, վոր կուլակները տեղ տեղ գյուղերում ղեկավարութեանն իրանց ձեռքն են առել և խորհուրդները միայն կուլակների գործակատարի դեր տարել:

Չքավորները գյուղում դեռ այնպիսի դիրք չեն ձեռք բերել, վոր գյուղում ղեկավար դեր խաղան:

Այժմ, յերբ գյուղում դասակարգային պայքարը սրվում է, անհրաժեշտ է վոչ միայն չքավորներին կազմակերպել, այլ և անհրաժեշտ է, վոր չքավորներն իրանք գյուղում կազմակերպվող ուժ լինեն:

Չունևորների հետ զբաղվելը, աշխատելը, չափազանց դժվար, կարևոր պատասխանատու գործ է, այդ գործը տանելու

համար պետք է շատ լավ իմանալ գյուղի քաղաքական դրու-  
թյունն ու չքավորներին,— ինչպես կազմակերպող ուժի,— դերը:

Գյուղի սոցիալիստական շինարարութեան հաջողութիւնն  
ստեղծարարի, իսկ մասնավորապէս գյուղական տնտեսութիւնը  
բարձրացնելը, խորհուրդների մասսայական աշխատանքը զննելը,  
կոլխոզներէ ու փոխովոյնների աշխատանքի հաջողութիւնը մի-  
այն այն ժամանակ է հնարավոր, յետեւ այդ աշխատանքը կատա-  
րող գյուղական կազմակերպութիւնները կուսակցական և խոր-  
հրդային իշխանութեան հաստատուն գիծը տանեն: Իսկ դա ել  
իւր հերթին այն ժամանակ է հնարավոր, յերբ ապահովված լինի  
այնտեղ պրոլետարական ազդեցութիւնն ու ղեկավարութիւնը:

Կամպանիայի ժամանակ մենք պայքարում ենք չքավորնե-  
րի համար, գոռում ենք նրան տված արտոնութիւնների մասին,  
բայց դա այն չի, ինչ վեր հարկավոր է: Պետք է չքավորների  
հետ սխտեմատիկ, ամենուրեք աշխատանք կատարել: Չքավորու-  
թեան գրուպպաների միջոցով պետք է չքավորներին դեպի աշ-  
խատանք քաշել, նրանց պատասխանատու դարձնել ու նրանցից  
կոնտրոլ կազմակերպել:

Գյուղի կուսակցական որդաններն ու խորհուրդները պետք  
է այնպէս անեն, վոր չքավորական գրուպպաները մասնակցեն  
գյուղացիական անտեսութիւնները բարձրացնելու համար տըր-  
վող վարկերը, սերմի փոխատւութիւնը բաժանելու գործին: Ապա  
նրանք պետք է մասնակցեն արտոնութիւններ տալու, գյուղա-  
տնտեսական տուրքից ազատելու աշխատանքներին և այլն:

Ահա չքավորների գրուպպաների այս տեսակ գործնական  
աշխատանքը հենց իրանց, չքավորների դիրքը կբարձրացնի, կա-  
վելացնի նրանց նշանակութիւնը: Աշխատավոր գյուղը հաշվի  
կառնէ չքավորութեան խմբակին, սա ել խորհրդային գյուղի իս-  
կական կազմակերպող ուժ կդառնա:

Նախընտրական կամպանիայի դասերն ի նկատի ունենալով  
մենք պետք է չքավորների վերաբերմամբ յեռանդուն աշխա-  
տանքի ձեռնարկենք:

Մենք անհրաժեշտ ենք համարում, վոր կուսակցական բը-  
ջէջները հենց հիմա, նախ քան գործառնացանի կամպանիան ծա-  
վալելը, նոր գյուղխորհուրդներին կից չքավորութեան գրուպպա-  
ներ կազմակերպեն:

Չքավորների խմբակներ կազմակերպելով կուսակցական բը-  
ջէջները նրանց անելիքը պետք է համարեն գյուղատնտեսական

սեկցիայի կազմած ցանքային պլանը նախորդ քննելը: Բացի  
դրանից, նրանք պետք է քննեն վարկային ընկերութիւններից  
փոխատւութիւն ստացողների ցուցակը և ամենաօգտիւ մաս-  
նակցութիւնն ունենան դարնանացանի կամպանիային:

Իսկ մեր խորհուրդներին կից չքավորական խմբակների ա-  
ռաջին գործնական աշխատակը կլինի:

Այսպէս ուրեմն, գյուղխորհուրդներին կից չքավորական  
գրուպպաներ պետք է կազմակերպվեն հենց այժմ:

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ԳԵՂՁԿՈՒՇԻՆԵՐԻՆ ՍՄԵՆԱՍԵՄ ՈՒՇԱԴՐՈՒ- ԹՅՈՒՆԸ ՊԵՏԲ Ե ԴԱՐՁՆԵԼ

Մենք ամենամեծ աջակցութիւն և գործնական ոգնու-  
թիւն պետք է ցույց տանք գեղջկուհիներին՝ դեպի հասարակա-  
կան գործունէութիւնն ունեցած նրանց ձգտումներում:

Կանանց կողմից մենք բացառիկ ակտիւութիւն ենք տես-  
նում:

Կինը վոչ միայն ընտրական ժողովներն և յեկել, այլ և  
իրան այդ ժողովի լուրջ և ակտիւ մասնակից է ցույց տվել:  
Կինն իրան հատուկ ուղղամտութեամբ բաց է անում այն հան-  
ցանքները, վորոնց մասին նույն իսկ ակտիւ չքավորը, բատրա-  
կը կամ միջակը վախենում են խոսել: Կինը կացարձակ ու սուր  
կերպով մտրակում է մեր բոլոր թերութիւնները:

Տեղերում վերընտրութիւնները ղեկավարող Բագլի բան-  
վորները միաձայն հաստատում են, վոր յետեւ չքավորները կու-  
լակներին դեմ մղած իրանց պայքարում հաջողութիւն են ունե-  
ցել, զբաժնում մեծ չափերով կանանց են պարտական:

Կնոջ աշխատանքին բացառիկ ուշադրութիւն պետք է  
դարձնել, վորովհետեւ կինն ավելի քան ուրիշ վոր և է մեկը՝  
քննադատութեամբ է վերաբերվում գեպի մեր ամեն մի սխալը:

Խորհրդային իշխանութիւնն առաջարկ կանանց մաս-  
նակցութեան թրջուհուն կրկնակի ազատութիւն է տվել քան  
չքավորին, բատրակին ու միջակին: Յետեւ Խորհրդային իշխանու-  
թիւնն այդ վերջիններին հող, ջուր, դպրոց, հիվարդանոց,  
տրակտոր է տվել և այլն, ապա կնոջը հանել է ստրկական գրու-  
թիւնից, արգելել է բազմակնութիւնը, հասարակական կյանքի  
քաշել ու իրավունքի կողմից հովասարեցրել տղամարդկանց

Մենք պետք է ամեն կերպ աջակցութիւն ցույց տանք կա

նանց ակտիվությարը և ոգոնք, վոր այդ ակտիվությունը կյանքի մեջ կիրառվի: Մենք պետք է մեր քաղաքական դրության բոլոր առավելությունները ոգտագործենք ու թույլ չտանք, վոր մեր դասակարգային թշնամի կուլակներն իրանց կողմը չքաշեն կանանց, մի բան, վար նրանք արդեն փորձում են անել:

Գյուղի աշխատանքի ղեկավար կուսբջիջներն ու խորհուրդները պետք է կանանց հետ գործնական աշխատանքը սկսեն ներանից, վոր կանանց անպատճառ ղեպի սեկցիաները քաշեն և սեկցիաների բյուրոներն անդամներն վրա դնեն սեկցիաներում և խորհրդում կանանց աշխատանքի ղեկավարության պատասխանատվությունը:

Բատրակներ, չքավորներ և կանայք,—անա մեր ներկա աշխատանքի հիմքերի հիմքը:

## ՊԵՏՔԵ ՎԵՐԱՑՆԵԼ ԲՈԼՈՐ ԹԵՐՈՒԹՈՒՆՆԵՐԸ

Վերջնորական կամպանիան ոգնեց գյուղական աշխատանքում յեղած շատ թերություններ բաց անելու: Այդ կողմից շատ է ոգնել նույնպես և Բագվի բանվորների մասնակցությունը:

Ինչ է պարզվել գյուղում:—Յերբեմն ազադակող խայտառակություններ գյուղխորհուրդներում, դպրոցներում, հիվանդանոցներում, կոոպերատիվներում, կոլխոզներում, փոխոգկոմներում, դատարաններում: Մանավանդ շատ հանցագործություններ են եղել գյուղատնտեսական տուրքի գործում, վարկերը բաշխելում ու սպառողական կոոպերացիայում:

Յեկ իսկապես կան տեղեր, վորտեղ կուլակներն ամենապակաս չափերով են տուրքավորված՝ տուրքի ծանրությունը գցելով սակավակարող ու միջակ տնտեսությունների վրա:

Սպառողական կոոպերացիայում բազմաթիվ գողություններ են տեղի ունեցել, դեռ չխոսելով պարզապես վաճառքեր գործառնության մա ին: \*

Շատ, շատ վատ է չքավորներին վարկ տալու գործը. վորովհետև հաճախ այդ վարկերը ընկնում են կուլակների, առևտրականների ու հենց վարկային ընկերությունների վարչությունների անդամների ձեռքը:

Հետո, գյուղական ապագարատներն ու դայրակագմակերպություններն աղտոտված են հակախորհրդային տարրերով, վորոնք մեծ չարիք են պատճառում.—այնտեղ պատահում են նախկին պրիստամիներ, վոստիկանական ծառայողներ, տանուտերեր, կուլակներ ու կալվածատերեր: Կուլակները ներս են խցկվում փոխոգկոմներ, կոոպերատիվների վարչությունների, կոլխոզների մեջ:

Փողովորական դատարաններում տեղ են գտել վոլոկիտան ու բյուրոկրատիզմը, գործերն ամիսներով և ավելի ձգձգում են: Նոր խորհուրդների առաջ խնդիր է դրվում գոյություն ու



(12308-57)

16005-58

նեցող թերութիւններն ուղղել ու աննորմալութիւնները վերացնել: Սակայն այդ աշխատանքը չի կարելի տանել հենց ենպես, կուստար կերպով, անփութութեամբ: Այստեղ հարկավոր է առաջ շարժվել ծրագրած, մշակած պլանով, խորհրդային բոլոր ապարատներում, սկսած գովգործկումից ու գովառական հիմնարկութիւններէն մինչև գյուղխորհուրդն ու նրա սեկցիաները:

Գյուղական խորհուրդները մարտ ամսվա ընթացքում պետք է ուղղեն, վերջացնեն հաշվետվական ու վերընտրական կամպանիայի ժամանակ նկատված բոլոր թերութիւնները: Իսկ այն թերութիւններն ու աննորմալ յերևույթները, վերոնց վերացնելու համար ավելի յերկար ժամանակ է պահանջվում, պետք է սալ գյուղխորհուրդների սեկցիաներին, վորպեսզի նրանք շարունակեն զբաղվել այդ թերութիւնները վերացնելու հարցով: Սեկցիաներն անհրաժեշտ միջոցներ են մտածում, ապա ներկայացնում գյուղխորհուրդին, վոր հաստատի:

Այս գործը շատ կարևոր գործ է և դրա վրա պետք է կենտրոնացնել աշխատավոր մասսաների ու գյուղական ակտիվի ամբողջ ուշադրութիւնը:

Իսկ գովառական և դայրագործկումները պետք է պարբերաբար ստուգեն թերութիւնները վերացնելու համար գյուղխորհուրդների կատարած աշխատանքը:

Խորհրդի անելիքն է հենց այժմ իսկ վերացնել, հազթահաբել գյուղի բոլոր և բոլոր թերութիւնները:



ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԲԱՑ Ե ԱՐԵԼ ԳՅՈՒՂԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՆ Ե ԱՅԴ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՍԵՐՈՒՄ ՈՒ ՍԵԿՑԻԱՆԵՐՈՒՄ ԿԱՐԴԱԼՈՒ ՀԱՄԱՐ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ

(Ինչ պետք է անեն նոր բնօրված գյուղխորհուրդները)

### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՐԵՎԱՆ ՅԵՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղական խորհուրդների վերընտրութիւնների ժամանակ թե հենց իրանց՝ խորհուրդների աշխատանքներում և թե առհասարակ գյուղում բազմաթիվ թերութիւններ են յերևան յեկել:

Գյուղական խորհուրդների սեկցիաները չեն աշխատել կամ թույլ են աշխատել:

Գյուղացիական Փոխադարձ Ոգնութեան Կոմիտեաները (փոխօգկոմ) նրանով չեն զբաղվել, ինչով վոր պետք է զբաղվին և գյուղխորհուրդներն ել նրանց աշխատանքի վրա գրեթե վոչ մի ազդեցութիւն չունեն:

Գյուղական խորհուրդները չեն զեկավարել կոոպերացիայի, վարկային ընկերութիւնների աշխատանքները, չեն զեկավարել կուլեկտիվներն ու արտելները: Ինչ հոգս են տարել գալրոցների, հիվանդանոցների, խրճիթ-ընթերցարանների մասին և ճանապարհների վրա քիչ են ուշադրութիւն դարձրել: Հողաբաշխման ժամանակ վոչ մի միջոց չեն ձեռք տուել, կամ բավականաչափ

միջոցներ չեն ձեռք առել չքավորներին պաշտպանելու կուլակներէց և ունևորներէց:

Ձրային խորհուրդների, միրաբների և ջավարների գործունեյությանը չեն հետևել և քիչ են ուշադրություն դարձրել:

Տեղ-տեղ միասնական գյուղատնտեսական տուրքը սխալ է բաշխվել. յեղել են այնպիսի անփութություններ, վորոնց շնորհիվ կուլակներին կամ տուրքի յենթակա որչեկտները թագցրել են:

Գյուղխորհուրդների վորոշ նախագահներ ու անդամներ անուշադիր են գտնվել դեպի գյուղացիների փանգատները, կուլակների կատարած խայտարակությունները չտեսնելն են դրել:

Գյուղխորհուրդներին կից Պետական Ապահովագրության ագենտ են ջոկել կուլակներին ու մյուս ձայնագրերկ տարրերին:

Գյուղխորհրդի անդամներն ենպես են յեկել նիստերին, վոր կարծես ակամա պարտադիր աշխատանք են կատարում, և խորհրդում կամ գյուղում վոչ մի իսկական գործ չեն կատարել: Ձեն զբաղվել սակավակարող ծխերին ոգնություն հասցնելու, հասարակական վար ու ցանքս կազմակերպելու գործով:

Խորհուրդներն ու իրանց սեկցիաները վոչ մի հոգացողություն չեն արել կուտերատիֆներ կազմակերպելու, բաղնիստներ շինելու, ջրհորներ փորելու, լավ ջուր բերելու և այլն:

Մի խոսքով գյուղխորհուրդներն իրանց ուսուցի տնտեսությունով ու կուլտուրական աշխատանքով չեն զբաղվել, կամ զբաղվել են, բայց շատ քիչ:

### ԻՆՉ Ե ՊԱՐՏԱԿԱՆ ԱՆԵԼՈՒ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴԸ

Գյուղխորհուրդն իր տերրիտորիայի միակ իրավագոր տերն է: Գյուղխորհուրդը պետք է զբաղվի գյուղի բոլոր տնտեսական ու կուլտուրական գործերով:

Գյուղական խորհուրդը պարտավոր և կոլլեկտիվ տնտեսություն, մելիորատիվ, անասնապահական և ուրիշ ընկերություններ կազմակերպել ու զարգացնել:

Գյուղական խորհուրդը պետք է հետևի, վոր չունևորներին վարկը ճիշտ բաշխվի, պիտի միջամտի յերբ տեսնում է, վոր վարկի բաշխմանը հսկող կազմակերպությունը խախտում է գյուղի չքավոր մասի շահերը:

Մեր գյուղական խորհուրդների աշխատանքում զխավորը գյուղացիական տնտեսությունը բարձրացնելն է: Իրա համար էլ գյուղական խորհուրդը նայում և հետևում է, թե ինչպես է բաշխվում հողն ու ինչպես բաց թողնվում ջուրը: Նայում է, վոր վարկ ստացվի գյուղատնտեսական ինվենտար ձեռք բերելու համար: Միջոցներ է վորոնում գյուղացիական սակավակարող տնտեսություններին վարկ տալու և նրանց համար ինվենտար ձեռք բերելու համար: Հսկում է, վոր ժամանակին ցանելու սերմացուն, մաքրվի, բաշխվի ու ժամանակին ցանվի: Բատրակների ու չքավորների տնտեսությունների համայնական հերկ ու ցանք է կազմակերպում, ջրաբաշխական և ջրելու առուները նորոգում է ու նորերը շինում: Ղեկավարում է փոխոգկոմիտեի աշխատանքը, իր նիստերում փոխոգկոմիտեի ղեկուցումներն է լսում, նրանց պլանները հաստատում և այլն: Իրանց միջից պետական ապահովագրության իրազորներ է նշանակում: Վերահսկում է վարկային ընկերությունների գործունեյությունը, իր նիստերում նրանց ղեկուցումներն է դնում ու պլաններ ընդունում:

Անա այն առորյա, առաջին հայացքից մանր, սակայն չափազանց կարևոր հարցերը, վորոնցով պետք է զբաղվի գյուղխորհուրդը, իր նիստերում քննի և գյուղի բատրակ, չքավոր ու միմիջակ մասի շահերը կյանքի մեջ պաշտպանի:

Գարնանացանի կամպանիան առաջին անհետաձգելի, ամենազխտավոր խնդիրն է, և այդ խնդրով գյուղխորհուրդը պետք է զբաղվի հենց այժմ:

Գյուղական խորհրդի հիմնական անելիքն է նույնպես՝ հողալ գպրոցների մասին, հողալ խրճիթ-ընթերցարանների, անգրագիտությունը վերացնող դպրոցների, հիվանդանոցների, բժշկական կետերի մասին, ապա և կովել համաճարակ հիվանդությունների դեմ:

Այդ, նույնպես և տնտեսական հարցերը գյուղական խորհուրդը դնում է իր նիստերին, հանձնարարում է սեկցիաներին, վոր մշակեն այդ հարցերը, քննում է գյուղական ընդհանուր ժողովներում:

Վատ է ու վոչ մի բանի պետք չէ այն գյուղխորհուրդը, յեթե իր դպրոցի լուսամուտների ապակիները ջարդված են, շենքը չեն տաքացնում, յեթե բժշկական կետում ջուր չկա, փայտ չկա, յեթե դպրոցական հասակի հասած յերեխաները չեն սովորում:

Վոչ մի բանի պետք չէ այն խորհուրդը, վոր ճանապարհները չի շտկում, կամուրջներ չի շինում, չի զբաղվում բարեշինութեան, դաշտերի պարարտման, անասնապահութեանը դարդացնելու, ցանքսային տարածութեանն ընդարձակելու խնդիրներով:

### ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ԳՅՈՒՂԵՈՐՀՈՒՐԴՆ ԱՅԺՄ

1. Գյուղական խորհուրդը պետք է իր հերթական նիստում անմիջապես յերեք սեկցիա կազմակերպի.

- ա) Գյուղատնտեսական.
- բ) Կուլտուր-լուսավորական.
- գ) Բարեշինութեան:

Գյուղական խորհրդի ամեն մի անդամը պետք է աշխատի սեկցիաներից մեկին ու մեկում, նայած իր ցանկութեանն ու ընդունակութեանը:

Սեկցիաներում վճռական ձայնի իրավունքով պետք է աշխատեն բժիշկները, ս.սուցիչները, փոխօգկոմի անդամները, գյուղատնտեսները և այլն (տես գյուղխորհրդի կանոնադրութեանը), յետև մինչև անգամ նրանք գյուղխորհրդի անդամ չեն: Խորհրդի սեկցիաները պարտավոր են հենց այժմ բյուրոներ (իբրևս պրեզիդիում) շոկել, վորոնք և պարտավոր են սեկցիայի համար աշխատանք վորոշել ու սկսել այդ աշխատանքը:

2. Գյուղական խորհուրդը պետք է հենց այժմ գարնանացանի կամպանիայով զբաղվի, այդ կամպանիան տանելու սլանը մշակի. վճռի ու չմոռանա բոլոր այն հարցերը, վոր կամպանիայի հետ են կապված: Բամբակային ու այլոններում բամբակի, իսկ հացահատիկ ցանելու ու այլոններում հացահատիկի ցանքսերի հաստատուն տարածութեան սահմանի: Ցուցմունքներ տա կոլեկտիվներին, արտելներին, ընկերութեաններին, փոխօգկոմներին և ոգնել նրանց: Որ առաջ հոգա սերմի մասին, ժամանակին սերմ հասցնի, զտի—մաքրի: Ոգնի չքավորներին ու բատրակներին, վոր անհրաժեշտ ինվենտար ու սերմ ստանան ու հետևեն, վոր վարկերը կանոնավոր բաժանվեն: Ժամանակին նորօգն դաշտերը ջրելու առումները:

Մենք առաջարկում ենք, վոր գարնանացանի կամպանիայի հարցերը վճռեն խորհուրդներում և գյուղական արտադրական խորհրդակցութեաններում, իսկ սեկցիայի գործնական աշխատանքները դնել գյուղատնտեսական սեկցիայի, ինչպես գյուղխորհրդի հանձնաժողովի վրա:

3. Գարնանացանի կամպանիան հաջող տանելու համար գյուղական խորհուրդը գյուղատնտեսական ու կուլտուր-լուսավորական սեկցիաների ոգնութեամբ պետք է իր տերրիտորիայի վրա գտնվող ամբողջ ընկերութեանը ծանոթացնե գյուղատնտեսական տուրքի նոր որենքի հետ, վոր ցանքսերն ավելացնելու դեպքում մեծ արտոնութեաններ է տալիս միջակ տեսակութեաններին: Այդ նպատակով գյուղական բոլոր ընդհանուր ժողովներում, խրճիթ-ընթերցարանում ու մյուս տեղերում պետք է կարգալ այդ նոր որենքն ու պարզաբանել, բացատրել:

4. Պետք է խորհուրդներում կարգալ քննել ու մշակել ընտրողների կողմից նոր խորհրդին տված նախազը: Հարցերը բաժանել սեկցիաների վրա, ցուցմունքներ տալ սեկցիաներին ու հարցերը հերթի դնելով՝ նրանց աստիճանաբար իրագործելուն ձեռնարկել:

5. Գյուղական խորհրդի պարտքն ենք համարում մինչև հոկտեմբեր ամիսն իր անդամների անգրագիտութեանը վերացնել, լիկկայան կազմակերպելն ու դպրոցական զբաղմունքներին հաճախելու գործը դնելով կուլտուր-կրթական սեկցիայի վրա:

Գյուղական խորհուրդներին առաջարկում ենք իրանց անգրագիտության վերացնելու հարցում համառ լինել, ի նկատի ունենալով, վոր խորհուրդների անգրագետ կազմի հետ վոչ մի աշխատանք կարգին չի դնի:

6. Պետք է մասնակցել սպառողական կոոպերացիայի վերընտրութեաններին, դրա համար նախորոք գյուղատնտեսական սեկցիայի միջոցով հետազոտելով կոոպերատիվը, յետև կա, և խորհրդում լսել կոոպերատիվի նախագահի ու հետազոտութեանը կատարող սեկցիայի զեկուցումը և հետո, խորհրդի անունից՝ գործնական ցուցմունքներ տալ նոր վարչութեանը:

7. Խորհրդի հերթական նիստերում կարգալ գյուղական խորհուրդներին և խորհրդի անդամներին իրավունքներին ու պարտականութեանների մասին անձնական վկայականներում տրապարված կանոնադրութեանն, իսկ սեկցիայի նիստերում՝ կարգալ սեկցիաների կանոնադրութեանը:



## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՍԻՏԵՅԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՍԻՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԻՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՅԵՎ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑԻԱԻԹՅԱՆ ՏՈՒՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԹԵՔԵՎԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյուղացիութեան կողմից իր տնտեսութեանը բարձրացնելու համար գործադրած ջանքերը խրախուսելու նպատակով Խորհրդային Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն Խորհրդային Միութեան բոլոր գյուղացիական տնտեսութեանների 35%-ը տուրքից ազատում է և կոլլեկտիվներին ունեցած բոլոր արտոնութեանները պահպանում, միաժամանակ անհրաժեշտ է համարում գյուղացիութեան հիմնական միջակ մասի միասնական գյուղատնտեսական տուրքի ծանրութեանը թեթևացնել, դրա համար էլ վորոշում է.

1. Միասնական գյուղատնտեսական տուրքի ընդհանուր գումարը 1929—1930 թվին իջեցնել և հասցնել 375 միլիոն ռուբլու:

2. Այն ուայոններում, վորտեղ գյուղատնտեսական տուրք պետք է տրվի ցանքսի համեմատ, տուրքավորումից ազատ է մընում ցանքսերի այն ամբողջ տարածութեանը, վոր ավելացած կլինի 1929—1930 և 1930—1931 թվականներին, համեմատած 1928—29 թվին յեղած ու տուրքի յենթարկված ցանքսային տարածութեան հետ: Այս արտոնութեանը տրվում է բոլոր անհատական ու բոլոր կոլլեկտիվ տնտեսութեաններին, բացի կոլլեկտային տնտեսութեաններից:

5. Բերքը բարձրացնող միջոցներ ձեռք առնելու համար գյուղացիութեանը խրախուսելու և էլ ավելի շահագրգռելու համար՝ ա) ամեն մի տնտեսութեանից հասնող տուրքի գումարից 10% զիջում անել այն հողային համայնքներում, վորտեղ բերքը բարձրացնելու համար ձեռք են առնում Խորհրդային Միութեան

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 1928 թվի դեկտեմբերի 15-ի վորոշումով նախատեսված միջոցները՝ բերքը բարձրացնելու վերաբերմամբ: Իսկ այն գյուղերում, վորտեղ այդ միջոցները կը գործադրեն վոչ թե հողային համայնքներն, այլ առանձին տնտեսութեանները, ապա այդպիսի տնտեսութեաններին տուրքի գումարից զիջում անել 5%. բ) գյուղատնտեսական տուրքից բոլորովին ազատվում է անհատական և կոլլեկտիվ տնտեսութեանների փորձնական դաշտերի յեկամուտը, վորտեղ նոր կուլտուրաներ են ցանված կամ կատարելագործված միջոցներով են մշակված և վոր մինչև կես դեսյատին տարածութեան ունեն:

6. Տեխնիկական կուլտուրաների համար սահմանված արտոնութեանները պետք է պահել, առանձնապես պետք է պահել բոմբակի, վորչի ու բազուկի ցանքսերի տուրքավորումը յեկամուտի նորմաների համաձայն, վոր յերկու անգամ պակասեցված են հացահատիկային կուլտուրաների տուրքերից:

7. Պետք է 1928—29 թվի համեմատութեամբ իջեցնել գյուղատնտեսական մեքենաները վարձով տալուց ստացվող յեկամուտը այնպես, վոր տնտեսութեան տուրքավորվող յեկամուտի մեջ մանի՝ ա) մեքենայական շարժիչ ունեցող գյուղատնտեսական բարդ մեքենաների յեկամուտի 25—50%-ը, բ) գյուղատնտեսական մյուս բարդ մեքենաների յեկամուտի 10—25%-ը: Տրիերների (սերմագոլիչներ) ու տեսակավորողների յեկամուտը տուրքի չի յենթարկվում:

8. Գյուղացիութեան տնտեսական հաշիվների կայունութեան մտցնելու համար, յերեք տարի (1929—30, 1930—31 և 1931—32 թ.) չպետք է բարձրացնել դաշտապահութեան, մարգագահութեան ու անտանապահութեան յեկամուտային այն նորմաները, վորոնցով 29—30 թվին յուրաքանչյուր վճարողի տուրքը պետք է հաշվվի, պահելով նույնքան ժամանակի (3 տարվա) համար 1928—29 թվին սահմանած տուրքի չափը (1928 թվի ապրիլի 21-ի միասնական գյուղատնտեսական տուրքի կանոնադրութեան 29, 30 31 և 32-րդ հոդված):

9. Շատ ուտող ունեցող տնտեսութեանների տուրքավորման ծանրութեանը թեթևացնելու և տնտեսութեան կտոր-կտոր դառնալը պակասեցնելու համար՝ ա) վորտեղ տուրքը հաշվվում է տնտեսական ընդհանուր յեկամուտից՝ պետք է տուրքի գումարից զիջում անել՝—7—8 ուտող ունեցող տնտեսութեաններին—5%, 9—10 ուտող ունեցող տնտեսութեաններին—10%, 11 և ա-

ավելի ուտող ունեցող տնտեսութիւններին 15% . բ) ծուխի ընդհանուր յեկամուտին նայած՝ գյուղական տնտեսութեան յեկամուտի վրա արվող տուկոսային հավելումները պետք է վերացնել բոլոր մինչև 500 բուբլի յեկամուտ ունեցող տնտեսութիւններին համար (միասնական գյուղատնտեսական տուրքի կանոնադրութեան հոդվ. 27, 1928 թ. ապրիլի 21):

Առաջարկել դաշնակից հանրապետութիւններին կառավարութիւններին, ըստ ռայոնների ճշտիվ սահմանելու 27-րդ հոդվածի համաձայն այդ հավելումների նորմաները 5-ից մինչև 10%-ի սահմաններում նայած տնտեսութեան տուրքավորվող յեկամուտի, փոխանակ անցյալ տարվա 5-ից մինչև 25% հավելման:

10. Անպայման արգելել միջակներին տնտեսութիւններն անհատական կարգով վոչ ըստ նորմաների տուրքավորելը (1928 թ. ապրիլի 21-ին հրատարակած միասնական տուրքի կանոնադրութեան 28-րդ հոդված):

Համաձայն իսկական յեկամուտի, անհատական կարգով և վոչ թե նորմայով տուրքավորել կուլակային հարուստ տնտեսութիւնները, վոր միջին թվով ավելի չպիտի լինեն Սորհրդային Միութեան գյուղացիական տնտեսութիւնների ընդհանուր թվի 3%-ից:



**ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈԼԽՈՋՆԻԿՆԵՐ, ԱՄԲՈՂԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ — ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵԿՏՐԱ**

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՓԸ, ՀԵՆՑ ԴՐԱՆՈՎ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԿԴԱՏԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

### 1929—30 թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՆՈՐ ՈՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Գյուղական տնտեսութեան զարգացման համար պիտի շահազրգուել չքավորական և միջակ մասսաներին, վոր նրանք լայնացնեն իրենց ցանքերը և բարձրացնեն իրենց հողերի բերքը:

Սի նպատակին հասնելու համար փոփոխվել է յեկող 29—30 թվի գյուղատնտեսութեան տուրքի որենքը:

Գյուղատնտեսական տուրքը դասակարգային տուրք է. նա ենպես և կազմվում, վոր տուրքի ծանրութիւնն ընկնի կուլակային տնտեսութիւնների վրա և գյուղացիական միջակ մասայի տուրքը թեթև լինի:

Գյուղատնտեսական տուրքի հիմնական գծերը հետևյալներն են:

#### ԱՄԲՈՂԶ ԶՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏՎՈՒՄ Ե ԱՆՑՅԱԼ ՏԱՐՎԱ ՊԵՍ

Տուրքից ազատված չքավորական և սակավակարող տնտեսութիւնների թիվն Ազրբեջանում հասնում է բոլոր գյուղացիական տնտեսութիւնների 47—48 տոկոսին: Յեկող տարի նոր որենքի համաձայն գյուղատնտեսական տուրքից ազատվելու են նույնքան տնտեսութիւններ:

### ԱԶՔԻ ԸՆԿՆՈՂ ԶԻՋՈՒՄ Ե ՏՐՎՈՒՄ ՄԻՋԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Նոր որենքը բավական թեթևացնում է միջակ տնտեսությունների տուրքը, դա արվում է, վոր ել ավրապնդվի չքավորական-միջակային դաշնքը և միջակ գյուղացիներին հնանալորություն արվի ուժեղացնելու իրենց տնտեսությունը: Նոր որենքը խրախուսում է միջակների տնտեսական գործունեյությունը՝ տալով տուրքային ամեն տեսակի արտոնություններ:

### ԲՈԼՈՐ ԶՔԱՎՈՐԱԿԱՆ, ՄԻՋԱԿԱՅԻՆ ՅԵՎ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՅՐԱԾ ՑԱՆՔՍԵՐՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ՏՈՒՐՔԻՑ

Բոլոր չքավորական, միջակային և կոլլեկտիվ տնտեսությունների 1929—30 թվին արած ավել ցանքերը բոլորովին տուրքի չեն յենթարկվում:

Ասենք թե տնտեսությունն անցյալ տարի ունեցել է 3 դեպյատին ցանքս, իսկ ես տարի ցանում է 4 դեպյատին, տուրքի յենթարկվում է վոչ թե 4 դեպյատինը, այլ 3 դեպյատինը, վորքան ունեցել է անցյալ տարի:

Յեթե մենք եղ արտոնությունը տուրքի փոխենք, եսպիտի արդյունք կստանանք, եղ տնտեսությունը ունենալով 4 դեպյատին ցանքս, 1 դեպյատին խաղողի այգի, 1 ձի, 2 յեղ, 2 կով և 9 բերան ուտող, 475 ռ. յեկամուտի համար պիտի վճարեր 47 ռուբլի, բայց հիմի կվճարի 33 ռ. 37 կոպ.

Նոր որենքն ուրիշ մի շարք արտոնություններ ել է տալիս:

### ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎՈՂՆԵՐԻ ՏՈՒՐՔԻՑ ԶԻՋՈՒՄ Ե ԱՐՎՈՒՄ

Նոր որենքը հատուկ զիջում է անում տուրքից են անտեսությունների համար, վորոնք հենց հիմա հասարակ միջոցներ են գործադրում իրենց հողերի բերքը բարձրացնելու համար:

Յեթե եղ միջոցները գործադրում են հողային համայնքի բոլոր անդամները, նրանք տուրքից 10 տոկոս զիջում են ստանում:

Յեթե եղ միջոցները գործադրում են առանձին գյուղացիական տնտեսությունները, նրանցից յւրաքանչյուրը 5 տոկոս զիջում է ստանում:

Եղպիտով վերև հիշված որինակի տնտեսությունը, յեթե ցանքը բացի 4 դեպյատինի հասնելուց, մի շարք գյուղատնտեսական միջոցներ ել է ձեռք առել բերքը շատացնելու համար, դարձյալ 5 տոկոս զիջում կստանա, ուրեմն կվճարի վոչ թե 47 ռուբլի, այլ 31 ռ. 70 կոպեկ:

### ԲԱԶՄԱՆԿԱՍ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵԼ Ե ՀԱՏՈՒԿ ԶԻՋՈՒՄ ԱՐՎՈՒՄ

Գյուղատնտեսական նոր որենքում առաջին անգամ ուշադրություն է դարձվում տնտեսության ուտող բերանների թվին, բազմանգամ տնտեսություններին արվում է հատուկ զիջում:

Այդ զիջումի չափը հետևյալն է՝ 7—8 ուտող բերան ունեցող տնտեսություններին տուրքից 5% զիջում է արվում, 9—10 ուտող բերան ունեցողներին—10%, 11 և ավելի ուտող բերան ունեցողներին 15%:

Դառնալով մեր որինակին, պիտի ելի 10% զիջում արվի, ուրեմն 47 ռուբլու փոխարեն պիտի վճարել 28 ռուբլի 60 կոպեկ:

### ՆՈՐ ՈՐԵՆՔԸ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Ե ԱՆՅՅԱԼ ՏԱՐՎԱ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄԸ ՄԻՋԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Անցյալ տարվա որենքով տոկոսային հավելումներ եին արվում են բոլոր տնտեսություններին, վորոնց յեկամուտը 300 ռուբլուց ավելի եր: Նոր որենքն ասում է, վոր տոկոսային հավելում պիտի արվի 500 ռուբլուց ավելի յեկամուտ ունեցող տնտեսությունների համար:

Եղպիտով մեր որինակի մեջ հիշած տնտեսությունն ելի աբտոնություն է ստանում, վորովհետև նրա մուտքը 500 ռուբլուց ավելի չե: Եղ արտոնությունը գործադրելուց հետո նրա տուրքը կազմում է 23 ռ. 22 կոպեկ, այնինչ անցյալ տարվա որենքով նա պիտի վճարեր 47 ռուբլի:

Նոր որենքը վոչ միայն բարձրացնում է այն յեկամուտի

չափը, վորից պետք է տոկոսային հավելում ստացվի, այն և բավական կրճատում և այդ հավելումների չափը:

Այսպես, որինակ՝ անցյալ տարվա որենքով հավերժան չափը հասնում էր անտեսութեան յեկամուտի 5-ից մինչև 25%-ը: Իսկ նոր որենքով այդ հավելումների ամենաբարձր չափը սահմանվում է 10%: Ուրիշ խոսքով՝ անցյալ տարի այդ անտեսութեանը, վոր 1000 բուբլի յեկամուտ է ունեցել, հավելում է ստացել 25% (250) և տուրք է տվել 1250 բուբլի յեկամուտից, իսկ այս տարի գյուղատնտեսական տուրք կստանան 1100 բուբլուց և վոչ թե 1250 բուբլուց:

### ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՅՈՒՅՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՅՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՎՈՒՄ ԵՆ

Կառավարութեան վորոշման համաձայն՝ բամբակի ցանքսի արտոնյալ տուրքավորումը պահվում է նույնպես և 1929—30 թվի համար, և դա մեր հանրապետութեան համար, ինչպես բամբակ տվող խոշոր հանրապետութեաններից մեկի համար—չափազանց կարևոր նշանակութեան ունի:

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒՅՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԵՆ ՏՈՒՐՔԱՎՈՐՎԻ ՓՈՐՁԱԴԱՇՏԵՐԸ

Գյուղացիներին իրանց դաշտերի բերքը բարձրացնելու հարցում շահագրգռելու համար՝ նոր որենքը տուրքավորումից բոլորովին ազատում է այն փորձագաշտերի յեկամուտը, վոր առանձին անտեսութեաններ են սարքում նոր կուլտուրաներով, կամ մշակման կատարելագործված նոր ձևերով և վոր կես գեսյատինից ավելի չէ:

Գյուղացիութեան շարքերում գյուղատնտեսական մեքենաները լայնորեն տարածելը շատ մեծ նշանակութեան ունի մեր դաշտերի բերքը բարձրացնելու գործում: Ուստի և բնակչութեանըն ել ավելի շահագրգռելու համար, նոր որենքով տուրքի չըպետք է յենթարկվեն այն յեկամուտները, վոր գյուղացիները կստանան տրիերներն ու տեսակավորող մեքենաները վարձու տալուց:

Իսկ գյուղատնտեսական մյուս, ավելի բարդ գործիքները կտուրքավորվեն ցածր տոկոսով: Այսպես, որինակ՝ մեքենայական շարժիչ ունեցող գյուղատնտեսական բարդ մեքենաների յեկա-

մուտի տուրքավորումը կիջեցնվի 50—75%, Գյուղատնտեսական մյուս բարդ մեքենաների յեկամուտի տուրքավորումը կիջեցնվի 75—90%:

Ընթացիկ տարում այդ յեկամուտները տուրքավորվել են լրիվ, ամբողջ 100 տոկոսով:

### ՅԵԿԱՍՈՒՏԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՍԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԶՊԵՏՔ Ե ՓՈՒՎԵՆ 3 ՏԱՐԻ

Առանձին կուլտուրաների յեկամուտի գոյութեան ունեցող նորմաները ինչպես և տուրքի չափը գրեթե ամեն տարի փոխվում էին, բարձրացվում էին:

Եկամուտի նորման ու տուրքի չափն ամեն տարի փոխելով գյուղացիական անտեսութեանը չէր կարողանում իր անտեսական հաշիվների մեջ կայունութեան մտցնել, վորովհետև նա առաջուց չէր իմանում, թե ցանքսերի յեկամուտն ինչ նորմայի տակ կդրվի և թե իրանից ինչ չափով տուրք կվերցնվի:

Վորպեսզի գյուղացիութեանը հաստատուն կերպով իր տընտեսական հաշիվները կառուցի՝ խորհրդային Միութեան կառավարութեանը 1929—30 թվի համար առանց բացառութեան բոլոր ոլորտների յեկամուտի նորմա է սահմանել և տուրքի չափերը յերեք տարի շարունակ չեն բարձրացնվի: Այս վորոշումը խիստ նշանավոր արտոնութեան է գյուղատնտեսական տուրք վճարողների համար:

Հիմնական գծերով վերցրած՝ սրանք են այն արտոնութեանները, վոր նոր որենքն է սահմանում գյիւղական անտեսութեան վերաբերմամբ: Նոր որենքը մեկն է խորհրդային իշխանութեան ձեռք առած միջոցներից, վոր մտցրվում է մեր գյուղական տընտեսութեանը շուտով զարգացնելու համար:

Մոտ որերս լրիվ կհայտարարվի գյուղատնտեսական տուրքի նոր որենքը:

Գյուղատնտեսական տուրքի նոր որենքը հրատարակված է այժմ (փետրվարին) նրա համար, վորպեսզի որ առաջ գյուղացիութեանը ծանոթանա այն լայն հնարավորութեանների հետ, վոր նրան տալիս է նոր որենքը:

Մեր գյուղական անտեսութեանը բարձրացնելու և ինդուս-

տրիալիզացիայի խնդիրը ներկայումս, մեր ամենամարտական խնդիրն է. նոր որենքը մեզ հնարավորութիւնն է տալիս մեր ցանքսերն ընդարձակելու, մեր դաշտերի բերքը բարձրացնելու:

Պետք է լայնորեն ժողովրդականացնել նոր որենքը, ինչպէս մեկը այն միջոցներէց, վոր իշխանութիւնն է ձեռք առնում գյուղական տնտեսութեան վերաբերմամբ:



ԱՆԳՐԱԳԵՏ ՄԱՍՍԱՅԻ ՀԵՏ ԳՈՐԾՆ ԱՌԱՋ ՏԱ-  
ՆԵԼ ՉԵՍ ԿԱՐՈՂ. ԱՄԲՈՂՋ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ՝ԱԿՏԻՎ  
—ԴԵՊԻ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊԻ- ՏԻ ԱՊԱՀՈՎԵԼ ԼԻԱԿԱՏԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒ- ԹՅԱՄԲ

(ԿՈՄՍՈՍՈԼԻ, ՓՈԽՈԳԿՈՄՆԵՐԻ, ԲԱՏԿՈՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ  
ՅԵՎ ԿԱՆԱՆՑ ՊԱՏՎԻՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ)

Խորհուրդների հաշվետու-վերընտրական կամպանիան հա-  
ջող է գնացել մեծ մասամբ շնորհիվ կոմսոմոլի, Հողանտառի  
Միութեան, փոխօգկոմիտեի և կոոպերացիայի մասնակցութեան:

Կոմսոմոլի և Հրավորութեան ակտիվի ինստրուկտիվ զբաղ-  
մունքները, կարնավալները, իրենց անդամների միջոցով իրենց  
կազմակերպութիւններում նակազի մշակումը, խորհրդի անդամ-  
ների նախնական հաշվետուութեանը և թեկնածուներ շնկելը,—  
այս բոլորի շնորհիվ ընտրական կամպանիան ակտիվ է անցել  
և նոր խորհրդի կազմը գործունյա է դուրս յեկել:

Այժմ մեր անելիքը պիտի լինի մասսաների ակտիվութեա-  
նը պահել ամրացնել և գյուղական խորհրդի անդամների ղեկա-  
վարութեանն ուժեղացնել իրենց սեփական կազմակերպութեան-  
ների կողմից: Այն կազմակերպութիւնների կողմից, վորոք  
խորհուրդն են ուղարկել իրենց ներկայացուցիչներին:

Մեզ մոտ սովորական է դարձել աղմկել շատ խոսքեր, լո-  
զունգներ ասել, նակազ տալ, առաջ քաշել իրա ներկայացուցչին  
խորհրդի մեջ, իսկ հետո այդ առաջ քաշածին մենակ թողնել  
լողունգներով, նակազներով շրջապատված. մեկ էլ նոր վերընտ-  
րութիւնների ժամանակ հարձակվել իրա ընտրվածի վրա և  
հուզված քննադատել ու ասել թե նա խորհրդում վոչինչ չի  
արել:

Մենք գործիչ ենք ուղարկել խորհուրդը. և նրան ոգնելու  
սովորեցնելու, նրա խորհրդային աշխատանքը ղեկավարելու փո-  
խարեն, մենք մոռանում ենք նրան ել խորհուրդն էլ:

Մենք անհրաժեշտ ենք համարում, վոր գյուղի և քաղաքի

խորհուրդներն իրենց ներկայացուցիչներին ուղարկող կազմակերպութիւններն իրենց պարտքը համարեն ոգնելու և ղեկավարելու իրենց ընտրած մարդկանց:

Կոմսոմոլը իր խորհուրդ ուղարկած անդամների ծրագրային աշխատանքը պիտի կազմի նակազի հիման վրա: Աշխատանքի և կենցաղի, անգրագիտութեան վերացման, յերիտասարդների կուլտուրական կարիքների բավարարումը և դրանց իրագործելու կարգը պիտի հանձնարարի կոմսոմոլն իր անդամների միջոցով: Կոմսոմոլի կազմակերպութեանը ոգնելով խորհուրդների անդամների աշխատանքին դրանով պիտի աջակցի ամբողջ գյուղխորհրդի գործունեութեանը:

Գյուղի պրոլետարական մասը խորհուրդներում այժմ 60 տոկոս է կազմում: Դա ամբողջովին անգրագետ է թե այբբենական գրագիտութեան և թե հասարակական տեսակետից: Այդ մասային հենց առաջին քայլերից պիտի ուժեղ կերպով ղեկավարել: Հողանտարի Միութիւնն իր վրա պիտի վերցնի այդ մասային սովորեցնելու և ակտիվացնելու աշխատանքը: Հողանտարի Միութիւնը կազմակերպել է գյուղի չքավորներին վերընտրութիւնների ժամանակ, այժմ պիտի նույնպիսի վճռականութեամբ տանի նրանց ղեկավարութեան գործը՝ գյուղխորհրդի աշխատանքներում: Հողանտարի Միութիւնը խորհրդի իր ներկայացուցիչներին մի ժամ անդամ առանց ղեկավարութեան չպիտի թողնի. այդ ղեկավարութեանը պիտի իրականացնել հատուկ կոնֆերանսների, հրահանգելու, դասախոսութիւնների, չքավորական խմբակների աշխատանքի, համապատասխան կազմակերպութիւնների կողմից գրագիտական գպրոցներ կազմակերպելու միջոցով և այլն:

Միևնույնը պիտի ասել փոխողկոմների և պատվիրակուհիների ժողովների մասին: Գյուղխորհրդի գեղջկուհիներին պիտի հատուկ ուշադրութեան դարձնել. պատվիրակուհիների ժողովները և կանանց մէջ գործող կազմակերպութիւնները պիտի անհրաժեշտ պայմանները ստեղծեն գեղջկուհիների աշխատանքի համար:

Հասկանալի է, վոր փոխողկոմների, կոմսոմոլի, Հողանտարի Միութեան առհասարակ բոլոր կազմակերպութիւնները գործողութիւնները, վորոնք իրենց ներկայացուցիչներին գյուղխորհուրդ են ուղարկել, պիտի մի ամբողջ միասնական պլան կազմեն: Որինակ՝ գյուղխորհրդի անդամների անգրագիտութեանը

պիտի վերացնել ընդհանուր ուժերով՝ Գլխաղլուսավարի ղեկավարութեամբ:

Այդպիսով խորհուրդ ուղարկած մեր ներկայացուցիչներին ոգնելը և ղեկավարելը ամեն կերպ պիտի ապահովված լինի:

Դավգործկոմները խորհուրդների աշխատանքները կանոնավորելու գործին պիտի քաշեն բոլոր հասարակական կազմակերպութիւններին և նրանց աջակցութեամբ դնեն խորհուրդների աշխատանքները:

ԳՈՐԾԵՆԲ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՁԵՎԵՐՈՎ. ԾԵՆԲԵՐ  
ԾԻՆԵՆԲ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՎԱՐԸ ՅԵՎ ՑԱՆԸ—ՓՈԽՈԳ-  
ԿՈՄՆԵՐԻ ՀԱՐՎԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե. ՈԳ-  
ՆԵՆՔ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՆԱԽԿՐԱՅԻ ՅԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐ-  
ԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ, ԳԱՎԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ, ԲԱԳԻՈՐՀՐԴԻ, ԴԱՅ-  
ՐԱԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ, ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻՆ, ՓՈԽՈԳԿՈՄՆԵՐԻ ԿԵՆՏ-  
ՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻՆ, ԿՈԼԽՈՉՑԵՆՏՐԻՆ, ՔԵՅԲԻՐԼԻԳԻԻՆ ՅԵՎ  
ՓԱՍՏՈՒԿԲԻՐԼԻԳԻԻՆ.

Գարնանացանի կամ պանիան ծավալելու համար Կենտրոնա-  
կան Գործադիր կոմիտեյի նախագահութիւնը Չեր ուշագորու-  
թիւնն է հրաւիրում.

1. Ցանքային կամ պանիայի քաղաքական ահագին նշանա-  
կության վրա, ինչպէս և այն գործնական անելիքների, վոր այդ  
կամ պանիան նպատակ է դրել իր համար, ինչպէս ցանքային  
տարածութիւնն ընդարձակելն է ու բերքի չափը բարձրացնելը:

2. Ամեն տեսակ սարտաժի ու կամ պանիան քանդելու վոր  
ձերի վրա, վոր կուրակ ու հակախորհրդային մյուս տարրերը կը-  
գործադրեն իրանց ցանքսերի տարածութիւնը պակասելնելով,  
կոլխոզների, արտելների, ընկերութիւնների աշխատանքները  
կազմալուծելով, վարկաբեկելով կառավարական այն միջոցները,  
վոր ձեռք են առնվում աշխատանքները հաջող տանելու համար:

3. Յեւ այն բանի վրա, վոր անհրաժեշտ է աշխատավոր  
գյուղացիութեանն ամենալայն կերպով պարզաբանել կամ պա-  
նիայի նշանակութիւնը, վոր անհրաժեշտ է վճռական կերպով  
հակահարված տալ բոլոր կուրակային փորձերին, և վերջապէս,  
վոր անհրաժեշտ է, վորպէսզի բոլոր աշխատավորները, ամբողջ  
խորհրդային հասարակայնութիւնն ու խորհրդային ստորին ա-

պարատը մասսայական մասնակցութիւնն ունենան գարնանա-  
ցանի կամ պանիան գործնականորեն դնելու:

Նախագահութիւնն հարկաւոր է համարում առաջարկել.—

I.

Մինչև մարտի 10-ը դայրագործկոմիտեների պլենումները գու-  
մարել մասնակցութեամբ գյուղխորհուրդների նախագահների ու  
քարտուղարների, բյուրոների անդամների, գյուղատնտեսական  
սեկցիաների, փոխոգկոմիտեների, կոլխոզների գործիչներին, վարկա-  
յին ընկերութիւնների անդամների և բոլոր գյուղատնտեսների:

Պլենումների հիմնական հարցն է գարնանացանի կամ պա-  
նիայի հարցը: Պրտի զեկուչէն գամ գործկոմիտեների կազմաժիննե-  
րի վարիչները կամ գամ գործկոմի նախագահութեան նույն նշա-  
նակութիւնն ունեցող անդամը կամ պանիայի կազմակերպչական  
կողմի մասին, իսկ հողքածնի վարիչը կամ նրա տեղապահը՝ կամ  
պանիա վարելու մասին ընդհանուր ցուցմունքներ պիտի տա:

Պլենումը պետք է դայրաների համար ծրագիր մշակել, տ-  
մեն մի գյուղխորհրդի ցուցմունքներ տա և վորոշի, թե յուրա-  
քանչյուր կազմակերպութիւնն ինչ աշխատանք պետք է կատա-  
րի և ինչ գործնական նագրուղկայով (Չրամատակարարում, վար-  
կի բաշխում, գյուղատնտեսական գործիքներ վարձու տալ) սեր-  
մելն բաց թողնել):

Պլենումները պետք է այնպէս տանել, վոր գյուղական գոր-  
ծիչները բացարձակապէս և մանրամասնորեն ամեն անսակ ցուց-  
մունքներ ու խորհուրդներ ստանան:

Հենց այդ պլենումին էլ, ոգտվելով գյուղխորհուրդների նա-  
խագահների ու քարտուղարների ներկայութիւնից՝ դայրայի  
պլենումը աշխատանքի ընդհանուր կազմակերպչական հարցերի  
շուրջը ցուցմունքներ է տալիս նոր ընտրված խորհուրդներին:

II.

Մարտի 10 ից մինչև 20-ը գյուղի ամբողջ խորհուրդները  
ակտիվ մասնակցութեամբ պետք է գյուղական խորհուրդների  
ընդլայնած նիստերը գումարել ցանքային կամ պանիայի հարցի  
վերաբերմամբ և քննել գյուղխորհուրդի աշխատանքի գործնական  
պլանը: Այս պլանը կազմում է գյուղատնտեսական սեկցիան՝  
մասնակցութեամբ գյուղատնտեսի, կոլխոզների, փորձադաշտերի  
գործիչների և նրանց, վորոնք մասնակցում են կոոպերատիվու-

յին ու տնտեսական կազմակերպութիւնները կամպանիային, վորից հետո միայն պլանը մտցնվում է գյուղխորհուրդ:

Կամպանիան վարելու ժամանակ գյուղխորհուրդները պետք է ի նկատի ունենան ազրո-մինիստրի մասին ղեկավարող որդանների վորոշման պարտադիր կերպով գործազրելը, այսինքն՝ թե ամենաքիչը գյուղատնտեսական ինչ միջոցներ պետք է գործազրեն: Գործնական աշխատանքում առանձնապես կարևոր դեր ունի խորհրդի գյուղատնտեսական սեկցիան, վորի անդամներն իրանց տեղերում գարնանացանի կամպանիայի կատարողներն են հանգիստնում:

Փոխդեկտմները, վորոնց հիմնական աշխատանքը սեփական ուժերով հողը կոլեկտիվ կերպով սշակելու և հերկելու մեջն է կայանում, նույնպես պետք է իրանց պլանն ունենան, համաձայնեցրած գյուղատնտեսական սեկցիայում գյուղական ընդհանուր պլանի հետ:

III.

Գյուղական խորհուրդների աշխատանքը պետք է տարվի գյուղացիութեան չունևոր ու միջակ խավերին, գյուղատնտեսական միացութիւններին, կոլեկտիւններին ու փոխդեկտմներին կազմակերպված կերպով ղեկավարելու, հսկելու և ոգնութիւն հասցնելու գծով:

Այդ բանը կարևոր է մանավանդ նրանով, վոր Ազրբեջանում բարձր արժեք ունեցող կուլտուրաների, — բամբակի, բրնձի, ծխախոտի ու մյուս բաների ցանքսը հենց գարնանն է լինում:

Գլխավոր ոգնութիւնը կայանում է նրանում, վոր ժամանակին ու բավական քանակութեամբ ջուր տրվի ջրելու համար, ինչքան կարելի է սերմեղները, գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները վարձով տրվին, և առաջին հերթին չքավորների միութիւններին, ինչքան կարելի է արագութեամբ վարկ բաժանել ցանքս անողներին. — այս բոլորը կազմակերպվում է գյուղական խորհուրդների պատասխանատվութեամբ:

IV.

Կամպանիայի սիստեմատիկ և ամենօրյա ղեկավարութեան համար պետք է դայրագործկոմներն կից ցանքսային հատուկ յեռյակներ կազմակերպեն, վորոնց կազմի մեջ պետք է մտնեն դայ-

րայի նախագահը, Ազրբեջանի դայրակոմիտիայի քարտուղարն ու տեղական գյուղատնտեսը:

Ցանքսային յեռյակների կարգադրութիւններն ու ձեռնարկած միջոցները տեղերում պարտադիր են առանց բացառութեան բոլոր գյուղխորհուրդներին, կոոպերատիվային ու տնտեսական կազմակերպութիւնների, ինչպես և ազրոգործիչների համար:

Արված հարցի վերաբերմամբ ձեր ձեռնարկած ընդհանուր միջոցները հաղորդեցեք նախագահութեանը:

Գյուղական ընդհանուր ժողովներում, գյուղխորհուրդներում և դայրագործկոմներում պետք է լայնորեն բացատրել գյուղատնտեսական նոր տուրքը, վոր նշանավոր չափերով արտոնութիւններ է տալիս միջակների ու սակավակարող տնտեսութիւններին ու խրախուսում, վոր ցանքսային տարածութիւնն ընդլայնեն:

Այս շրջաբերականը կատարելու մասին տեղեկութիւններ տվեք Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահութեանը:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահի սեղապահ  
ՅՅՆԵԴԻՅԵՎ.

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի քարտուղար  
Ս. ՄԱՄԵԳՈՎ.

## ԳԱՎԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ԿԱԶՄԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ

1. Դայրա և գյուղխորհուրդների աշխատանքի առաջարկ-վող ծրագրերը (գյուղխորհուրդների անելիքները մարտ-ապրիլի համար) պիտի կատարել բացառիկ խնամքով և ուշադրութամբ, հնարավորութեան գեպքում անձամբ ղեկավարելով դայրազոր-կոմիտեի պլենումները:

2. Դայրազորկոմիտեի պլենումներին պիտի գործնական ցուցմունքներ տալ խորհուրդներին, վոր նրանք վերացնեն խոր հուրդների գործունեությունն այն թերությունները, ինչ պարզ-վել է հաշվետու-վերընտրական կամպանիայում (տես. «Ուղղել անցած աշխատանքի թերությունները» հոդվածը):

3. Ի նկատի պետք է առնել, վոր գյուղխորհուրդների նա-խագահների և քարտուղարների վերապատրաստության գավա-ռական կուրսերը լինելու են ապրիլին. դրա համար նախորոք պիտի շինք գտնել, սովորողների կազմը նախազծել և այլն. կուր-սերի տևողությունը լինելու է 3 շաբաթ—մի ամիս:

4. Յենթադրում ենք ապրել ամսին դայրասեմինարներ ու-նենալ՝ սեկցիաների բլուրտների, վերաստուգիչ հանձնաժողով-ների, դատական կոմիտեաների, փոխոգկոմիտեի գործիչներին վերապատրաստելու համար: Սեմինարների գավառական կուր-սերի համար նյութերը կուղարկվեն հատուկ բրոշյուրով:

## ԴԱՅՐԱԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԽՈՐ- ՀՈՒՐԴՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ

1. Վերաստուգիչ հանձնաժողովների աշխատանքի մասին յեղած հոդվածը պիտի կարգալ վերստուգիչ հանձնաժողովների նիստերում և նրանով ղեկավարվել մինչև այն հանձնաժողովների աշխատանքի մասին հատուկ կանոնադրություն ստանալը:

«Ինչ պիտի անեն գյուղխորհուրդները» հոդվածը պիտի կարգալ և ուսումնասիրել խորհուրդների և սեկցիաների նիստե-րում:

«Կառավարության վորոշումները գյուղատնտեսական տուր-նի մասին» հոդվածը պիտի կարգալ գյուղական ժողովներում և մշակել գյուղատնտեսական սեկցիայում:

«Ցանքսային կամպանիայի մասին» հոդվածը և շրջաբերա-կանը կարգալ ու բացատրել գյուղական ժողովներում, խորհուրդ-ների, սեկցիաների, գյուղական արտադրական խորհրդակցու-թյունների նիստերում և դայրաների լայնացրած պլենումնե-րում:

Չքավորական և կանանց ակտիվի մասին հոդվածը կարգալ և նախապես մշակել կուլտուր-լուսավորական սեկցիաներում, խորհուրդների նիստերում և կուլտուր-լուսավորական գործիչ-ների, խրճիթվարների, կոմսոմոլի ակտիվի, գյուղխորհուրդների նախագահների, քարտուղարների և խորհուրդների կուլտուր-լու-սավորական սեկցիաների բյուրոների հատուկ դայրախորհրդակ-ցություններում:

Խորհրդի անդամներին լրիվ ղեկավարութամբ ապահովելու մասին յեղած հոդվածը պիտի կարգալ կոմյերիտմիութեան, փոխ-ոգկոմիտեի, բաակոմիտեի, կոոպերատիվների և ուրիշ կազմակեր-պությունների նիստերում:

2. Խորհուրդները և գյուղական ժողովները մասին յեղած հին կանոնադրությունը մնում է ուժի մեջ, նորը կմտցրվի 2 ամսից հետո:

3. Դայրաները և խորհուրդները գործավարական մատյան-ներ կստանան սեմինարներից հետո:





ՆԿԱՏԱԳՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԿԱՏԱԳՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*յերես*

1. Ցանկային կաապահայի բաղաձական յեվ կազմակերպչական նշանակությունը . . . . .	3
2. Վերջ սանձ գյուղխորհուրդների անդամների անգրագիտությանը . . . . .	7
3. Վերահսկիչ հանձնաժողովների պարտականությունները . . . . .	10
4. Չբավորների յեվ կանանց ակտիվը դեպի ղեկավար աշխատանք . . . . .	13
5. Պեճ է վերացնել բոլոր քերականները . . . . .	17
6. Գյուղխորհուրդների անեյիֆները . . . . .	19
7. Քաղվածք . . . . .	24
8. Միասնական գյուղատնտեսական տուրքի մասին . . . . .	27
9. Խորհուրդների նոր անդամներին պիտի ապահովել լիակատար ղեկավարությամբ . . . . .	33
10. Շրջաբերական . . . . .	36
11. Գավազոձկանների կազմաժինների վարիչների ուժադրության . . . . .	40
12. Դայրագործկանների յեվ գյուղխորհուրդների ուժադրության . . . . .	41


2073

ՀՀ Ազգային գրադարան

595



NL0047828



lp

00